

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Սահմանադրական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝	1905/B05 <Ֆինանսական իրավունք>
Որակավորման աստիճան՝	բակալավրի կրթական ծրագիր
Կազմեց՝	իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Է. Շաթիրյանը

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2013

## ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1905/B05 <Ֆինանսական իրավունք> (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (16 դասախոսություն, 8 սեմինար, 8 գործնական, 28 ինքնուրույն աշխատանք)

3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

### Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի *նպատակն է* ուսանողին տալ գիտելիքներ դրամական ֆոնդերի կազմավորման, բաշխման և օգտագործման ոլորտների հասարակական հարաբերությունների, պետության ֆինանսական գործունեության հիմնական ուղղությունների և դրա իրականացման ընթացքում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, ինչպես նաև խթանել ուսանողի մոտ պետության ֆինանսական առողջացման հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրության աճը:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսանողի մոտ ֆինանսաիրավական կարգավորման նշանակության ընկալման, սույն ոլորտում իրավական գիտելիքների համակարգի յուրացման, ֆինանսական իրավունքի աղբյուրների և դրանց գործողության կառուցակարգի ուսումնասիրության ձգտման ձևավորումը,
- ֆինանսաիրավական նորմերի վերլուծության, դրանց մեկնաբանման և կիրառման նկատմամբ ինքնուրույն և ստեղծագործական մոտեցման փորձի ձեռքբերումը,
- պետության ֆինանսական գործունեությանը վերաբերող տարաբնույթ իրավական հարցերով սեփական դիրքորոշումները փաստարկված հիմնավորելու, տրամաբանորեն մտածելու, ինչպես նաև ֆինանսաիրավական նորմերը գործնականում կիրառելու կարողությունների մշակումը և զարգացումը:

### Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա գիտելիքներ.

- ֆինանսների, պետության ֆինանսական գործունեության իրավական հիմքերի, ֆինանսաիրավական նորմերի և դրանց գործողության կառուցակարգերի, Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական վերահսկողության կազմակերպարավական հիմքերի մասին,
- ՀՀ ֆինանսական համակարգի առանցքային ինստիտուտների մասին,
- ՀՀ ֆինանսական իրավունքի զարգացման հիմնական միտումների և կարևորագույն ուղղությունների, պետության ֆինանսական գործունեության կատարելագործման գործընթացի վրա դրանց ազդեցության մասին:

Ունակ կլինի.

(բուն մասնագիտական կարողություններ)

- վերլուծել ֆինանսաիրավական ինստիտուտների իրավական բովանդակությունը,
- բացահայտել ֆինանսաիրավական ակտերի բովանդակությունը և ճիշտ կիրառել դրանց դրույթները գործնականում,
- առաջարկներ ներկայացնել ֆինանսական համակարգի ինստիտուտների օրենսդրական կարգավորման կառուցակարգերի կատարելագործման վերաբերյալ:

### Քննությունների անցկացման ձևերը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ քննություններն անցկացվում են գրավոր, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Յուրաքանչյուր ընթացիկ քննության հարցատույնը պարունակում է 2 խնդիր, յուրաքանչյուրը՝ 2 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայ 0,5 է: Առավելագույն միավորին կարող է հավակնել խնդրի հարցերին ճիշտ պատասխան տված և դրանք հստակ, անհրաժեշտ ու բավարար նյութի շարադրմամբ հիմնավորված ուսանողը: Առանց հիմնավորման թեկուզ ճիշտ պատասխանը գնահատվում է 0 միավոր: Խնդրի հարցին (հարցերին) տված սխալ պատասխանի դեպքում ուսանողը կարող է հավակնել միավոր ստանալու, եթե փորձել է հիմնավորել այն: Այդ դեպքում միավորի արժեքը կախված

է հիմնավորման խորությունից, հիմնավորման մեջ ֆինանսական իրավունքի տեսության և ֆինանսական օրենսդրության իմացությունը արտացոլելու աստիճանից (նշված դեպքերում ուսանողը կարող է առավելագույնը հավակնել 1 միավորի):

Նախատեսված 10 միավոր առավելագույն արժեքով եզրափակիչ բանավոր քննության հարցատուրը պարունակում է 4 տեսական հարց յուրաքանչյուրը 2,5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

1-ին ընթացիկ քննությունը ներառում է թեմաներ 1-7-ը, 2-րդ ընթացիկ քննությունը՝ թեմաներ 8-13-ը:

## **ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

### **Ընդհանուր մաս**

#### **Թեմա 1**

#### **Պետության ֆինանսական գործունեությունը**

(1 ժամ դասախոսություն)

1. Ֆինանսների հասկացությունը և տեսակները: 2. ՀՀ ֆինանսական համակարգը (հասկացությունը, դրա առանցքային ինստիտուտները): 3. Պետության ֆինանսական գործունեությունը (հասկացությունը, երկակի բնույթը, ֆինանսական գործունեության իրականացման ձևերը և մեթոդները): 4. Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների համակարգը:

#### **Հարցեր 1-4 - Կարդացվում է ներածական դասախոսություն:**

#### **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

#### **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. Вострикова Л. Г. Финансовое право. Учебник для вузов (издание второе, переработанное и дополненное), Москва, "Юстицинформ", 2006.
2. Финансовое право. Учебник (второе издание, переработанное и дополненное), отв. ред. Е. Ю. Грачева, Г. П. Толстопятенко, Москва, "Прспект", 2007.
3. Финансовое право: учебник /отв. ред. проф. С. В. Запольский. - 2-е изд., испр. и доп. - М.: Юридическая фирма "Контракт": Волтерс Клувер, 2011.
4. <Գանձապետական համակարգի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2001թ. հուլիսի 27-ին):
5. <Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշումը:
6. <Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1996թ. հունիսի 30-ին):
7. <Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1460-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշումը:

## Թեմա 2

### ՀՀ ֆինանսական իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ

(1 ժամ դասախոսություն)

1. Ֆինանսական իրավունքի առարկան: 2. Ֆինանսական իրավունքի մեթոդները: 3. Ֆինանսական իրավունքի աղբյուրները: 4. Ֆինանսական իրավունքի համակարգը: 5. Ֆինանսական իրավունքի սահմանազատումը իրավունքի այլ ճյուղերից:

Հարցեր 1, 2, 4 - անցկացվում է դասախոսություն՝ սխեմաների օգտագործմամբ:

Հարցեր 3, 5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

#### Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

#### Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Петрова Г. В. Финансовое право. Учебник, Москва, "Проспект", 2009.
2. Финансовое право. Учебник (второе издание, переработанное и дополненное), отв. ред. Е. Ю. Грачева, Г. П. Толстопятенко, Москва, "Проспект", 2007.
3. Финансовое право: учебник /отв. ред. проф. С. В. Запольский. - 2-е изд., испр. и доп. - М.: Юридическая фирма "Контракт": Волтерс Клувер, 2011.
4. Эриашвили Н. Д. Финансовое право. – 3-е изд. –М.: "Юнити", 2011.

## Թեմա 3

### Ֆինանսաիրավական նորմեր և ֆինանսական իրավահարաբերություններ

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Ֆինանսաիրավական նորմերի ընդհանուր բնութագիրը (հասկացությունը, բնորոշ գծերը, դրանց կառուցվածքը): 2. Ֆինանսաիրավական նորմերի տեսակները: 3. Ֆինանսական իրավահարաբերություններ (դրանց բնորոշ գծերը, տարրերը և սուբյեկտները): 4. Ֆինանսական իրավահարաբերությունների դասակարգումը: 5. Ֆինանսաիրավական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության տեսակ:

Հարց 5 - անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Հարցեր 1-4 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ ուսանողներին նախապես հանձնարարված նյութերի խմբային քննարկման ձևով:

## **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

## **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. Вострикова Л. Г. Финансовое право. Учебник для вузов (издание второе, переработанное и дополненное), Москва, "Юстицинформ", 2006.
2. Финансовое право. Учебник (второе издание, переработанное и дополненное), отв. ред. Е. Ю. Грачева, Г. П. Толстопятенко, Москва, "Проспект", 2007.
3. Финансовое право: учебник /отв. ред. проф. С. В. Запольский. - 2-е изд., испр. и доп. - М.: Юридическая фирма "Контракт": Волтерс Клувер, 2011.

## **Թեմա 4**

### **Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորումը**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար,  
2 ժամ գործնական)

1. Ֆինանսական վերահսկողության հասկացությունը, խնդիրները, համակարգը, դերն ու նշանակությունը: 2. Ֆինանսական վերահսկողության տեսակները: 3. Ֆինանսական վերահսկողության ձևերը: 4. Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը ՀՀ-ում: 5. Ստուգումների անցկացման կարգը և ժամկետները. ստուգման արդյունքների ամփոփումը: 6. Ստուգումն իրականացնողների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները: 7. Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինները (ՀՀ Ազգային ժողովի ֆինանսական-վերահսկողական լիազորությունները, ՀՀ վերահսկիչ պալատի գործառույթները, վերահսկողության ձևերը և տեսակները. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից վերահսկողություն իրականացնելու կարգը, պայմանները և կազմվող արձանագրությունները, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործառույթները, ՀՀ ֆինանսների նախարարության վերահսկողական գործառույթները): 8. Առողիտորական գործունեության իրավական կարգավորումը: 9. Հաշվապահական հաշվառման իրավական կարգավորումը:

**Հարցեր 3-5, 8, 9- անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:**

**Հարցեր 1, 2, 6, 7 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը և նորմատիվ ակտերին՝ տվյալ հարցերի վերաբերյալ խորը գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:**

**Հարցեր 3-7 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկման նպատակով:**

**Վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հռչակագրի (ընդ. 1977թ. Ֆինանսական վերահսկողության գերագույն աստիճանների միջազգային կազմակերպության (INTOSAI) IX Կոնգրեսի կողմից) դրույթների խմբային քննարկում:**

**Հարցեր 5 -7 - գործնական պարապմունք. ուսանողները բաժանվում են թիմերի և քննարկում առաջադրված խնդիրները: Հարց 7 - ուսանողները ներկայանում են նախապես իրենց տրամադրված ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշումներն և ՀՀ վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններն ուսումնասիրած, իսկ դասընթացի ժամանակ կազմակերպվում է այդ ակտերի խմբային քննարկում:**

## **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

1. Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:
2. <Այն կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին, որոնցում, կախված դրանց գործունեության ոլորտի՝ հանրության և պետության համար կենսական նշանակությունից, սլվյալ ոլորտը վերահսկող՝ ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգումներ, բացառության կարգով, կարող են իրականացվել վեց ամիսը մեկ անգամ> Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1925-Ն որոշումը:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի հունիսի 6-ի N 07-Ն հրամանը <Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը սահմանելու մասին>:
4. <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2000թ. մայիսի 17-ին):
5. <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. հուլիսի 3-ին):
6. <Հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1784-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1636-Ն որոշումը:
7. <Վերահսկիչ պալատի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2006թ. դեկտեմբերի 25-ին):

## **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. Бровкина Н. Д. Основы финансового контроля. Учебное пособие, Москва, "Магистр", 2007.
2. Петрова Г. В. Финансовое право. Учебник, Москва, "Проспект", 2009.
3. Румянцев А. В. Финансовый контроль (курс лекций). Москва, "Дело и Сервис", 2003.
4. Финансовое право. Учебник (второе издание, переработанное и дополненное), отв. ред. Е. Ю. Грачева, Г. П. Толстопятенко, Москва, "Проспект", 2007.
5. Финансовое право: учебник /отв. ред. проф. С. В. Запольский. - 2-е изд., испр. и доп. - М.: Юридическая фирма "Контракт": Волтерс Клувер, 2011.
6. <Առդիտորական գործունեության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին):
7. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշումներ և ՀՀ վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններ:
8. <Հաշվապահական հաշվառման մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին):
9. Վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հոչակագիրը (ընդ. 1977թ. Ֆինանսական վերահսկողության գերագույն ատյանների միջազգային կազմակերպության (INTOSAI) IX Կոնգրեսի կողմից):

## Հատուկ մաս

### Թեմա 5

#### **Բյուջետային իրավունք. ՀՀ պետական և համայնքների բյուջեները**

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Բյուջեի հասկացությունը և նշանակությունը. ՀՀ բյուջետային համակարգը: 2. Բյուջետային իրավունք. բյուջետային-իրավական նորմեր և բյուջետային իրավահարաբերություններ: 3. ՀՀ պետական բյուջեի կառուցվածքը (պետական բյուջեի եկամուտները և ծախսերը): 4. Համայնքի բյուջեի ձևավորման սկզբունքները. համայնքային բյուջեի կառուցվածքը (համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե), համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե)): 5. Դոտացիաներ, սուբվենցիաներ, համայնքային բյուջեների վարկերը և փոխառվությունները:

**Հարցեր 3, 4 - անցկացվում է դասախոսություն՝ սխեմաների օգտագործմամբ:**

**Հարցեր 1, 2, 5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված նյութերին, վեր հանում կարևորագույն հարցերը:**

**Հարցեր 2-5 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ ուսանողներին նախապես հանձնարարված նյութերի խմբային քննարկման ձևով:**

#### **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

1. Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:
2. <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. հունիսի 24-ին):

#### **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

<Ֆինանսական համահարթեցման մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1998թ. նոյեմբերի 24-ին):

### Թեմա 6

#### **Բյուջետային գործընթացը Հայաստանի Հանրապետությունում**

(1 ժամ սեմինար, 1 ժամ գործնական)

1. Բյուջետային գործընթացի հասկացությունը և փուլերը (ընդհանուր բնութագիրը): 2. ՀՀ պետական բյուջեի գործընթացի փուլերը (պետական բյուջեի նախագծի կազմումը, քննարկումը, բյուջեի ընդունումը, պետական բյուջեի կատարումը, պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության քննարկումը և հաստատումը): 3. Համայնքային բյուջեի գործընթացի փուլերը (համայնքային բյուջեի նախագծի կազմումը, քննարկումը, բյուջեի հաստատումը, համայնքային բյուջեի կատարումը, համայնքային բյուջեի կատարման մասին հաշվետվությունների քննարկումը և հաստատումը):

**Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները նախապես ուսումնասիրում են հանձնարարված նյութերը՝ տվյալ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:**

Հարցեր 2, 3 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ ուսանողներին նախապես հանձնարարված նյութերի խմբային քննարկման ձևով:

Հարց 2 - գործնական պարապմունք. կազմակերպվում է առաջիկա տարվա ՀՀ պետական բյուջեի մասին վիրտուալ օրենքի նախագծի քննարկում ՀՀ Ազգային ժողովի նիստում: Ուսանողները ներկայանում են նախապես իրենց տրամադրված նյութերն ուսումնասիրած:

**Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

**Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքը:

## **Թեմա 7**

### **Հարկային իրավունքի հիմունքներ**

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

1. Հարկի հասկացությունը և հիմնական գործառույթները. հարկերի դասակարգումը: 2. Հարկման տարրերի ընդհանուր բնութագիրը: 3. Հարկային իրավունք. հարկ վճարողների իրավունքներն ու պարտականությունները: 4. Պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտումների համար: 5. Հարկ վճարողների իրավունքների պաշտպանությունը: 6. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրումը:

Հարցեր 1, 2, 6 - անցկացվում է դասախոսություն՝ սխեմաների օգտագործմամբ:

Հարցեր 3-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են նախապես հանձնարարված նյութերին՝ տվյալ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով: Այնուհետև անցկացվում է գործնական պարապմունք. ուսանողները բաժանվում են թիմերի և քննարկում առաջադրված խնդիրները: Ուսանողները ներկայանում են նախապես իրենց տրամադրված ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշումներն ուսումնասիրած, իսկ դասընթացի ժամանակ կազմակերպվում է այդ ակտերի խմբային քննարկում:

**Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

1. Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

2. <Հարկերի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. ապրիլի 14-ին):

**Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. <Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2007թ. հոկտեմբերի 11-ին):

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի հունիսի 6-ի N 07-Ն հրամանը <Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիս-



տի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը սահմանելու մասին>:

3. <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2011թ. մայիսի 26-ին):

4. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշումներ:

## **Թեմա 8**

### **Հարկերի տեսակները**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար,  
2 ժամ գործնական)

1. Շահութահարկ (հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտները, <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, հարկի դրույքաչափը, համախառն եկամտի նվազեցումները, շահութահարկի գծով արտոնությունները, շահութահարկի կանխավճարները, շահութահարկի հաշվարկները, հարկի վճարման ժամկետները): 2. Եկամտային հարկ (հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտները, նվազեցվող եկամուտները, հարկի դրույքաչափերը, հարկային գործակալի կողմից հարկի պահում (գանձում) չիրականացնելու դեպքերը, եկամտային հարկի կանխավճարները, տարեկան եկամուտների մասին հաշվարկը, հարկի վճարման ժամկետները): 3. Ավելացված արժեքի հարկ (հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտները, հարկի դրույքաչափերը, ԱԱՀ վճարումից ազատելը, ԱԱՀ գրոյական դրույքաչափով հարկումը, հարկի վճարման ժամկետները): 4. Ակցիզային հարկ (հասկացությունը, հարկ վճարողները, հարկման ենթակա ապրանքները, հարկվող օբյեկտները, հարկի դրույքաչափերը, վերադարձվող ակցիզային դրոշմանիշերին ներկայացվող պահանջները, դրանցով դրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրելու ժամկետը, ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը, ակցիզային հարկի վճարման ժամկետները): 5. Հաստատագրված վճարներ (հասկացությունը, վճարողները, հարկվող գործունեության տեսակները, դրույքաչափերը, վճարման ժամկետները): 6. Արտոնագրային վճարներ (հասկացությունը, վճարողները, հարկվող գործունեության տեսակները, դրույքաչափերը, վճարման կարգը և ժամկետները): 7. Շրջանառության հարկ (հասկացությունը, վճարողները, հարկվող օբյեկտը, դրույքաչափերը, վճարման ժամկետները): 8. Գույքահարկ (հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտները, հարկի դրույքաչափերը, գույքահարկի գծով արտոնությունները, հարկի վճարման ժամկետները): 9. Հողի հարկ (հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտները, հարկի դրույքաչափերը, հողի հարկի գծով արտոնությունները, հարկի վճարման ժամկետները):

**Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:**

**Հարցեր 5 – 9 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված իրավական ակտերին՝ տվյալ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:**

**Հարցեր 1-7 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ ուսանողներին նախապես հանձնարարված նյութերի խմբային քննարկման ձևով:**

**Հարցեր 1-9 - գործնական պարապմունք. ուսանողները բաժանվում են թիմերի և քննարկում առաջադրված խնդիրները:**

## **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

## **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. <Ակցիզային հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2000թ. հուլիսի 7-ին):
2. <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. մայիսի 14-ին):
3. <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2010թ. դեկտեմբերի 22-ին):
4. <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին):
5. <Եկամտային հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2010թ. դեկտեմբերի 22-ին):
6. <Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2000թ. մարտի 24-ին):
7. <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1998թ. հուլիսի 7-ին):
8. <Հողի հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1994թ. փետրվարի 14-ին):
9. <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. սեպտեմբերի 30-ին):
10. <Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2012թ. դեկտեմբերի 19-ին):

## **Թեմա 9**

### **Ոչ հարկային եկամուտների իրավական կարգավորումը**

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար,  
1 ժամ գործնական)

1. Ոչ հարկային եկամուտների հասկացությունը և համակարգը: 2. Մաքսային վճարների հասկացությունը, տեսակները և դույքաչափերը: 3. Պետական տուրք (հասկացությունը, տեսակները, դրույքաչափերը, պետական տուրքի գծով արտոնությունները, պետական տուրք վճարողների իրավունքները և պարտականությունները: 4. Տեղական տուրքերի և վճարների հասկացությունը, տեսակները և դույքաչափերը: 5. Բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունը և տեսակները: 6. Ճանապարհային վճարի հասկացությունը և տեսակները: 7. Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ:

**Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:**

**Հարցեր 5-7 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված իրավական ակտերին՝ տվյալ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:**

**Հարցեր 2-7 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ ուսանողներին նախապես հանձնարարված նյութերի խմբային քննարկման ձևով:**

**Հարցեր 2, 3 - գործնական պարապմունք. ուսանողները բաժանվում են թիմերի և քննարկում առաջադրված խնդիրները:**

## **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

## **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. <Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1998թ. դեկտեմբերի 28-ին):
2. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը (ընդ. 2000թ. հուլիսի 6-ին):
3. <Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2005թ. նոյեմբերի 11-ին):
4. <Ճանապարհային վճարի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1998թ. մարտի 3-ին):
5. <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. դեկտեմբերի 27-ին):
6. <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. դեկտեմբերի 26-ին):

## **Թեմա 10**

### **Պետական ծախսերի իրավական կարգավորումը**

(1 ժամ դասախոսություն)

1. Նախահաշվաբյուջետային ֆինանսավորման հասկացությունը, նախահաշիվների տեսակները: 2. ՀՀ պետական բյուջեի ծախսերի հաշվառման և ֆինանսավորման կարգը: 3. Բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների իրավական կարգավորումը: 4. Պետական գնումների դերը պետական ծախսերի խնայողականության և արդյունավետության բարձրացման գործում:

**Հարցեր 1, 4 - անցկացվում է դասախոսություն:**

**Հարցեր 2, 3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված նյութերին՝ տվյալ հարցերի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:**

## **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

## **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

<Գնումների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2010թ. դեկտեմբերի 22-ին):

## **Թեմա 11**

### **Ապահովագրության, արժեթղթերի շուկայի և դրամաշրջանառության իրավական կարգավորումը**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Ապահովագրության ինստիտուտի տեղը ՀՀ ֆինանսական համակարգում, ապահովագրության ձևերը և տեսակները (բնորոշ գծերը, ձևերը (կամավոր և պարտադիր), տեսակները (ոչ կյանքի, կյանքի ապահովագրություն, վերաապահովագրություն)): 2. Ապահովագրական գործունեության լիցենզիան: 3. Ապահովագրական միջնորդային գործունեությունը. ապահովագրական ոլորտում կիրառվող պատասխանատվության միջոցները (ապահովագրական բրոքերային և ապահովագրական գործակալի գործունեությունը, սույն ոլոր-

տում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող սանկցիաները): 4. Արժեթղթերի հասկացությունը և տեսակները: 5. Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան (հասկացությունը, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները): 6. ՀՀ կենտրոնական բանկը՝ որպես արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության լիազոր մարմին. պատասխանատվությունն <Արժեթղթերի շուկայի մասին> ՀՀ օրենքի պահանջները խախտելու համար: 7. Դրամական համակարգի և դրամաշրջանառության հասկացությունը: 8. ՀՀ կենտրոնական բանկի դերը դրամաշրջանառության կարգավորման ոլորտում: 9. Դրամարկղային գործառնությունների իրավական կարգավորումը:

**Հարցեր 2-6 - անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:**

**Հարցեր 1-3 , 7-9 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը և օրենսդրական ակտերին՝ տվյալ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ (ավելի խորը) գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:**

**Հարցեր 2-4, 8 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ ուսանողներին նախապես հանձնարարված նյութերի խմբային քննարկման ձևով:**

### **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

### **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. <Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2007թ. ապրիլի 9-ին):
2. <Արժեթղթերի շուկայի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2007թ. հոկտեմբերի 11-ին):
3. <Դրամարկղային գործառնությունների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին):
4. <Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին> ՀՀ օրենքը:

## **Թեմա 12**

### **ՀՀ բանկավարկային համակարգը**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար,  
1 ժամ գործնական)

1. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր բնութագիրը: 2. Բանկային գործունեության լիցենզավորումը (լիցենզիա ստանալու նախնական հավանությունը, բանկի (օտարերկրյա բանկի մասնաճյուղի) գրանցումը և բանկային գործունեության լիցենզիայի տրամադրումը): 3. ՀՀ կենտրոնական բանկի կառավարումը. Կենտրոնական բանկի խնդիրները: 4. Կենտրոնական բանկի տեղը ՀՀ բանկային համակարգում: 5. Բանկային օրենսդրության խախտումները և դրանց համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող սանկցիաները: 6. Բանկային գաղտնիքի իրավական կարգավորումը: 7. Վարկային կազմակերպությունների իրավական վիճակը: 8. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը: 9. ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարը:

**Հարցեր 1-4, 9 - անցկացվում է դասախոսություն՝ սխեմաների օգտագործմամբ և խմբային քննարկման զուգակցմամբ:**

Հարցեր 5 – 8 - ինքնուրույն աշխատանք. ուսանողներն ուսումնասիրում են հանձնարարված օրենսդրական ակտերը՝ տվյալ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Հարցեր 2, 4-6, 9- անցկացվում է սեմինար պարապմունք՝ ուսանողներին նախապես հանձնարարված նյութերի խմբային քննարկման ձևով:

Հարցեր 2, 5, 6, 9 - գործնական պարապմունք. ուսանողները բաժանվում են թիմերի և քննարկում առաջադրված խնդիրները:

#### **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

#### **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. <Բանկային գաղտնիքի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1996թ. հոկտեմբերի 7-ին):
2. <Բանկերի և բանկային գործունեության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1996թ. հունիսի 30-ին):
3. <Վարկային կազմակերպությունների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. մայիսի 29-ին):
4. <Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին> ՀՀ օրենքը:
5. <Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2004թ. նոյեմբերի 24-ին):
6. <Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2008թ. մայիսի 26-ին):
7. <Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2008թ. հունիսի 17-ին):

### **Թեմա 13**

#### **Արժույթային կարգավորումը և արժույթային վերահսկողությունը**

(1 ժամ դասախոսություն)

1. Արժույթի, արտարժույթի, բանկային ոսկու և արժույթային գործարքների հասկացությունը:
2. Արժույթային կարգավորման հասկացությունը և բովանդակությունը. արժույթային վերահսկողություն: 3. Պատասխանատվությունն արժույթային օրենսդրության խախտումների համար:

Հարցեր 1, 2 - անցկացվում է դասախոսություն:

Հարց 3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողներն ուսումնասիրում են հանձնարարված նյութերը՝ տվյալ հարցի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

#### **Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:

#### **Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

<Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2004թ. նոյեմբերի 24-ին):

## Եզրափակիչ քննության հարցաշար

1. Ֆինանսների հասկացությունը և տեսակները:
2. Ֆինանսական համակարգի հասկացությունը, դրա ինստիտուտները:
3. Պետության ֆինանսական գործունեությունը, իրականացման ձևերը և մեթոդները:
4. ՀՀ Նախագահը, Ազգային ժողովը և Կառավարությունը՝ որպես ֆինանսական գործունեություն իրականացնող մարմիններ:
5. ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նպատակներն ու խնդիրները:
6. Ֆինանսական իրավունքի առարկան:
7. Ֆինանսական իրավունքի մեթոդները:
8. Ֆինանսական իրավունքի աղբյուրները:
9. Ֆինանսական իրավունքի համակարգը:
10. Ֆինանսական իրավունքի սահմանազատումը իրավունքի այլ ճյուղերից:
11. Ֆինանսաիրավական նորմերի բնորոշ գծերը և դրանց կառուցվածքը:
12. Ֆինանսաիրավական նորմերի տեսակները:
13. Ֆինանսական իրավահարաբերությունների առանձնահատկությունները և դրանց տարրերը:
14. Ֆինանսական իրավահարաբերությունների տեսակները:
15. Ֆինանսաիրավական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության տեսակ:
16. Ֆինանսական վերահսկողության հասկացությունը և համակարգը:
17. Ֆինանսական վերահսկողության տեսակները:
18. Ֆինանսական վերահսկողության ձևերի ընդհանուր բնութագիրը:
19. Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը Հայաստանի Հանրապետությունում:
20. Ստուգումների անցկացման կարգը:
21. Ստուգումն իրականացնողների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները:
22. ՀՀ վերահսկիչ պալատի գործառույթները, վերահսկողության ձևերը և տեսակները:
23. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից վերահսկողություն իրականացնելու կարգը, պայմանները և կազմվող արձանագրությունները:
24. Հարկային մարմինների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները:
25. Աուդիտորական գործունեության իրավական կարգավորումը:
26. Հաշվապահական հաշվառման իրավական կարգավորումը:
27. Բյուջեի հասկացությունը և նշանակությունը. ՀՀ բյուջետային համակարգը:
28. Բյուջետային իրավունք. բյուջետային-իրավական նորմեր, բյուջետային իրավահարաբերություններ:
29. Պետական բյուջեի եկամուտները:
30. Պետական բյուջեի ծախսերը:
31. Դոտացիաներ (լրավճարներ), սուբվենցիաներ, պետական վարկ, բյուջետային վարկեր և փոխատվություններ:
32. Պետական բյուջեի նախագծի կազմումը:
33. Պետական բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը:
34. Պետական բյուջեի կատարումը և բյուջեի կատարման հաշվետվությունը:
35. Համայնքի բյուջեի հասկացությունը և կառուցվածքը:
36. Համայնքի բյուջեի նախածի կազմումը, քննարկումը և հաստատումը:
37. Համայնքի բյուջեի կատարումը և բյուջեի կատարման հաշվետվությունը:
38. Հարկի հասկացությունը և հիմնական գործառույթները. հարկերի դասակարգումը:
39. Հարկման տարրերի ընդհանուր բնութագիրը:
40. Հարկային իրավունքի հիմունքներ:

41. Հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները. հարկ վճարողների իրավունքների պաշտպանությունը:
42. Պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտումների համար:
43. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրումը:
44. Շահութահարկի հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտները, համախառն եկամտի նվազեցումները, հարկի դրույքաչափը. <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները:
45. Շահութակարկի գծով արտոնությունները, շահութահարկի կանխավճարները, հարկի հաշվարկները, դրա վճարման ժամկետները:
46. Եկամտային հարկի հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտները, նվազեցվող եկամուտները, հարկի դրույքաչափերը:
47. Եկամտային հարկի կանխավճարները, հարկային գործակալի կողմից հարկի պահում (գանձում) չիրականացնելու դեպքերը, տարեկան եկամուտների մասին հաշվարկը, հարկի վճարման ժամկետները:
48. Ավելացված արժեքի հարկի հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտները, հարկի դրույքաչափերը:
49. ԱԱՀ վճարումից ազատելը, ԱԱՀ զրոյական դրույքաչափով հարկումը, հարկի հաշվարկման և վճարման ժամկետները:
50. Ակցիզային հարկի հասկացությունը, հարկման ենթակա ապրանքները, հարկվող օբյեկտները, հարկի դրույքաչափերը:
51. Վերադարձվող ակցիզային դրոշմանիշերին ներկայացվող պահանջները, դրանցով դրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրելու ժամկետը, ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը, ակցիզային հարկի վճարման ժամկետները:
52. Գույքահարկ:
53. Հողի հարկ:
54. Հաստատագրված վճարներ:
55. Արտոնագրային վճարներ:
56. Շրջանառության հարկ:
57. Մաքսային վճարների հասկացությունը, տեսակները և դրույքաչափերը:
58. Պետական տուրքի հասկացությունը, տեսակները, դրույքաչափերը. պետական տուրք վճարողների իրավունքները և պարտականությունները:
59. Պետական տուրքի գծով արտոնությունները:
60. Տեղական տուրքեր և վճարներ:
61. Բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունը և տեսակները:
62. Ճանապարհային վճարի հասկացությունը և տեսակները. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ:
63. Նախահաշվարկուղեւորային ֆինանսավորման հասկացությունը, նախահաշիվների տեսակները:
64. Պետական գնումների դերը պետական ծախսերի խնայողականության և արդյունավետության բարձրացման գործում:
65. Ապահովագրության իրավական կարգավորումը, ապահովագրության ձևերը և տեսակները:
66. Ապահովագրական գործունեության լիցենզիան:
67. Ապահովագրական միջնորդային գործունեությունը. ապահովագրական ոլորտում կիրառվող պատասխանատվության միջոցները:
68. Արժեթղթերի հասկացությունը և տեսակները:
69. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր բնութագիրը:
70. Բանկային գործունեության լիցենզիա ստանալու նախնական հավանությունը:
71. Բանկի (օտարերկրյա բանկի մասնաճյուղի) գրանցումը և բանկային գործունեության լիցենզիայի տրամադրումը:
72. ՀՀ կենտրոնական բանկի կառավարումը. Կենտրոնական բանկի խնդիրները:

73. ՀՀ կենտրոնական բանկի իրավասության ընդհանուր բնութագիրը:
74. Բանկային օրենսդրության խախտումները և դրանց համար Կենտրոնական բանկի կողմից կիրառվող սանկցիաները:
75. Բանկային գաղտնիքի իրավական կարգավորումը:
76. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը:
77. ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարը:
78. Վարկային կազմակերպությունների իրավական վիճակը:
79. ՀՀ կենտրոնական բանկի դերը դրամաշրջանառության կարգավորման ոլորտում:
80. Դրամարկղային գործառնությունների իրավական կարգավորումը:
81. Արժույթի և արժույթային արժեքների հասկացությունը:
82. Արժույթային կարգավորման հասկացությունը և բովանդակությունը:
83. Արժույթային վերահսկողություն. պատասխանատվությունն արժույթային օրենսդրության խախտումների համար:

## ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Տեսական աղբյուրներ

1. Է. Շաթիրյան, Ս. Մուրադյան <Ֆինանսական իրավունք> (ուսումնական ձեռնարկ), Երևան-2009:
2. Бровкина Н. Д. Основы финансового контроля. Учебное пособие, Москва, "Магистр", 2007.
3. Вострикова Л. Г. Финансовое право. Учебник для вузов (издание второе, переработанное и дополненное), Москва, "Юстицинформ", 2006.
4. Петрова Г. В. Финансовое право. Учебник, Москва, "Проспект", 2009.
5. Румянцев А. В. Финансовый контроль (курс лекций). Москва, "Дело и Сервис", 2003.
6. Финансовое право. Учебник (второе издание, переработанное и дополненное), отв. ред. Е. Ю. Грачева, Г. П. Толстопятенко, Москва, "Проспект", 2007.
7. Финансовое право: учебник /отв. ред. проф. С. В. Запольский. - 2-е изд., испр. и доп. - М.: Юридическая фирма "Контракт": Волтерс Клувер, 2011.
8. Эриашвили Н. Д. Финансовое право. – 3-е изд. –М.: "Юнити", 2011.

### Իրավական ակտեր

1. <Ակցիզային հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2000թ. հուլիսի 7-ին):
2. <Այն կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին, որոնցում, կախված դրանց գործունեության ոլորտի՝ հանրության և պետության համար կենսական նշանակությունից, տվյալ ոլորտը վերահսկող՝ ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգումներ, բացառության կարգով, կարող են իրականացվել վեց ամիսը մեկ անգամ> Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1925-Ն որոշումը:
3. <Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2007թ. ապրիլի 9-ին):
4. <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. մայիսի 14-ին):
5. <Արժեթղթերի շուկայի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2007թ. հոկտեմբերի 11-ին):
6. <Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2004թ. նոյեմբերի 24-ին):
7. <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2010թ. դեկտեմբերի 22-ին):
8. <Աուդիտորական գործունեության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին):
9. <Բանկային գաղտնիքի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1996թ. հոկտեմբերի 7-ին):
10. <Բանկերի և բանկային գործունեության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1996թ. հունիսի 30-ին):



11. <Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1998թ. դեկտեմբերի 28-ին):
12. <Գանձապետական համակարգի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2001թ. հուլիսի 27-ին):
13. <Գումամների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2010թ. դեկտեմբերի 22-ին):
14. <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին):
15. <Դրամարկղային գործառնությունների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին):
16. <Եկամտային հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2010թ. դեկտեմբերի 22-ին):
17. <Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2000թ. մարտի 24-ին):
18. <Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2007թ. հոկտեմբերի 11-ին):
19. <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. հունիսի 24-ին):
20. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի հունիսի 6-ի N 07-Ն հրամանը <Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը սահմանելու մասին>:
21. <Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշումը:
22. <Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1996թ. հունիսի 30-ին):
23. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը (ընդ. 2000թ. հուլիսի 6-ին):
24. <Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1460-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշումը:
25. <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2000թ. մայիսի 17-ին):
26. <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2011թ. մայիսի 26-ին):
27. <Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2005թ. նոյեմբերի 11-ին):
28. <Հաշվապահական հաշվառման մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին):
29. <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1998թ. հուլիսի 7-ին):
30. <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. հուլիսի 3-ին):
31. <Հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1784-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1636-Ն որոշումը:

32. <Հարկերի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. ապրիլի 14-ին):
33. <Հողի հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1994թ. փետրվարի 14-ին):
34. <Ճանապարհային վճարի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1998թ. մարտի 3-ին):
35. <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. սեպտեմբերի 30-ին):
36. <Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2012թ. դեկտեմբերի 19-ին):
37. <Պետական պարտքի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2008թ. մայիսի 26-ին):
38. <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. դեկտեմբերի 27-ին):
39. <Վարկային կազմակերպությունների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2002թ. մայիսի 29-ին):
40. <Վերահսկիչ պալատի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2006թ. դեկտեմբերի 25-ին):
41. <Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2004թ. նոյեմբերի 24-ին):
42. <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1997թ. դեկտեմբերի 26-ին):
43. <Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2008թ. մայիսի 26-ին):
44. <Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին> ՀՀ օրենքը (ընդ. 2008թ. հունիսի 17-ին):
45. <Ֆինանսական համահարթեցման մասին> ՀՀ օրենքը (ընդ. 1998թ. նոյեմբերի 24-ին):
46. Վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հռչակագիրը (ընդ. 1977թ. Ֆինանսական վերահսկողության գերագույն ատյանների միջազգային կազմակերպության (INTOSAI) IX Կոնգրեսի կողմից):